

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում արտակարգ իրավիճակների հեղուկացման ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովի 11.04.2014 թ. նիստի

Մասնակցությամբ՝

ՀՀ Արմավիրի մարզպետ՝

Ա. Ղահրամանյանի

ՀՀ Արմավիրի մարզում արտակարգ իրավիճակների հեղուկացման ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովի նախագահի տեղակալ՝

Ա. Ղուկասյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության վարչության պետ՝

Վ. Մկրտչյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ՝

Հ. Հարությունյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջարար

մասնագետ՝

Ա. Պողոսյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի

գյուղատնտեսության և բնապահպանության

վարչության պետ՝

Ա.Այվազյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի

գյուղատնտեսության և բնապահպանության

վարչության գյուղատնտեսության բաժնի պետ՝

Վ.Արրահամյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի

գյուղատնտեսության և բնապահպանության

վարչության գյուղատնտեսության բաժնի

գլխավոր մասնագետ՝

Մ.Սարիբեկյանի

Գյուղատնտեսության աջակցության

Արմավիրի մարզային կենտրոնի տնօրեն՝

Լ.Ալեքսանյանի

ՀՀ Արմավիրի մարզի ցրտահարությունից տուժած համայնքների ղեկավարների

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. 30.03.2014թ. տեղի ունեցած տևական ցրտահարության հետևանքով ՀՀ Արմավիրի մարզի համայնքներում գյուղատնտեսությանը հասցված վնասները գնահատելու միջոցառումների մասին

/ Ա.Ղահրամանյան- ՀՀ Արմավիրի մարզպետ /

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանը օրակարգային հարցի առնչությամբ Արմավիրի մարզում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պարճառված վնասները գնահատող հանձնաժողովի նիստի մասնակիցներին տեղեկացրեց, որ 2014 թվականի մարտի 30-ին տեղի ունեցած տևական ցրտահարությունից էապես վնասվել են մարզի 83 համայնքների գյուղատնտեսական մշակաբույսերը, ցանքատարածություններն ու այգիները: Ստեղծված իրավիճակում անհրաժեշտ է սեղմ ժամկետում ավարտել մարզի համայնքներում ցրտահարության հետևանքով գյուղատնտեսությանը հասցված վնասների գնահատման

աշխատանքները և համայնքային հանձնաժողովների կողմից կազմված ակտերը ներկայացնել մարզային հանձնաժողով՝ համապատասխան ընթացք փայտ նպատակով: Համայնքներում վնասների գնահատման աշխատանքների կատարման միասնականությունն ապահովելու նպատակով արդեն հանձնարարվել է ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության, ինչպես նաև առողջապահության և սոցիալական ապահովության վարչություններին՝ վնասների գնահատման և տեղեկատվական նյութերի համապատասխան ձևաչափերը օպերատիվ կարգով փրամադրել ցրտահարությունից փութած համայնքների ղեկավարներին:

Հանձնաժողովը որոշում է՝

1. Առաջարկել ցրտահարությունից փութած համայնքների ղեկավարներին՝

ա/ համայնքային հանձնաժողովների ակտերն ու տեղեկատվական նյութերը կազմել և մարզային հանձնաժողով ներկայացնել խնդրին առնչվող նախարարությունների, ինչպես նաև ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության կողմից մշակված և փրամադրված ձևաչափերին համապատասխան,

բ/ սեղմ ժամկետում ավարտել մարզի համայնքներում ցրտահարության պարճառով գյուղատնտեսությանը հասցված վնասների գնահատման աշխատանքները և համայնքային հանձնաժողովների կողմից համապատասխան ձևաչափերով կազմված ակտերն ու տեղեկատվական նյութերն ուղարկել մարզային հանձնաժողով՝ քննարկելու և համաձայնեցված ակտերն ու տեղեկատվական նյութերը հանրապետական հանձնաժողով և համապատասխան նախարարություններ ներկայացնելու նպատակով:

Հանձնաժողովի նախագահ՝



Մ. Քարության

Հանձնաժողովի քարտուղար՝



Դ. Դավթյան